

թիւնը նապաստակին և ձագարի շատ նման է . ետևի սրունքները համեմատութեամբ երկայն են , և ոտուըները թռչնոյ ոտքի նման՝ բայց խիստ մեծ , իսկ թաթիկները շատ կարծ են և ձեռքի կը նմանին . պոչը խիստ երկայն և թանձր է . գլուխը նապաստակի գըլիսյն նման է , դուրս ցըցուած խոշոր սև աչուըներով և երկայն ականջներով : Առնակի մորթը մութ գեղին է . իսկ գլխուն վրայ , թիկունքը և մէջքէն վար պոչին կողմը և կողերը մոխրագոյնի հետ խառնուած է . կղակին տակը , կուրծքն ու փորը մաքուր սպիտակ է : Ի չքէն վեր մետաքսանման երկայն մազերով ցանցառ յօնք ունի , և վերին շրթանցը վրայ թանձր և երկայն պես :

Կ վամիսին ոտուըներուն ու ձեռուըներուն չափազանց անհամեմատութեանը նյայելով կը զարմանայ մարդ՝ թէ ինչ պէս քալելու շարժելու ատեն նեղութիւն չքաշեր : Ի՞այց իրաւցընէ թէ որ ինքն ալ ուրիշ չորքուտանեաց պէս չորս ոտքով քալելու ըլլար , շատ նեղութիւն պիտի իմանար . բայց ինքը անոնց պէս չքալեր , այլ բոլը հնդիկ ձագարին ցեղին և գանկուրուին պէս՝ յատքուտելով ձամբայ կ'ընէ , և ետևի ոտուըները արագաշարժ և ջղալից ըլլալով՝ մէկ յատքելով ութը տասը ոտք հեռու տեղ կընայ նետուիլ : Իր մկանալից պոչն ալ կ'օգնէ իրեն յատքելու համար . անոր կըթընելով ոյժ կ'առնէ և զայն յենարանի տեղ կը ծառայեցընէ : Հատքելու ատենը գլուխը շիտակ կը բռնէ , և ձեռուըները այնպիսի կերպով մը կուրծքի մազերուն մէջ կ'ամփոփէ , որ աներեսոյթ կ'ըլլան : Այս սովորաբար աս դիրքով կը կենայ . բայց ժայռերէ վեր ելլելու կամ խոր տեղեր իջնալու ատեն՝ առջեի ձեռքերն ալ ոտքի տեղ կը ծառայեցընէ , ինչպէս որ երկուտանիներն ալ այնպիսի ժամանակ ձեռքերնին կը գործածեն ապահովութեան համար :

Իր ուտելիքն է պտուղ , ցորենի հատ , ծիլ , և այլն , զորոնք ձեռքով բերանը կը տանի կապկի պէս . իսկ ծառի դալար ուտեր չկընար ուտել . և կերակուր ու-

տելու ատեն ետևի ոտուըները առջեն առած , հանգիստ նստելով կ'ուտէ : Այլամիսը ձագարներուն պէս զետնափոր տեղուանք կը փորէ և հոն կը բնակի . բայց սաստիկ վախկոտ ըլլալուն շատ արթնութիւն կը բանեցընէ , և իր սուր Ճիրանները միշտ պատրաստ կը բռնէ զէնքի տեղ . բնութեամբ հանդարտաբարոյ է և անմինաս : Անքը գիշերները միայն զբոսանաց և իր կերակուրը գրտնելու կ'ելլէ իր ծակէն , և շատ ալ չչեռանար իր որջէն , ու պզտի շնկոցի ձայն մը լսածին պէս շտապաւ ծակը կը մննէ : Իր կենաց մեծագոյն մասը իր որջին մէջ կ'անցընէ ընտանիքովը մէկտեղ , կամ քնանալով և կամիր լեցուն համբարանոցներուն մէջի ցորեններուն ծիլերը շտկելով շտկուտելով լստ եղանակին . ասանկով շատ աշխատանք , հոգ չունի , և օրուան մեծ մասը քունով կ'անցընէ . կռնակը որջին մէկ կողմը տուած կը նստի , ետևի ոտուըները առջեւ կ'երկնցընէ և գլուխն ալ ինչուան երկու ծնգացը մէջ ծուելով կը խոթէ . ան ատեն երկու ձեռքերովը իր երկայն ականջները բռնած աչքերուն վրայ՝ վարագուրի պէս կը գոցէ , որպէս զի ամենայն կերպով հանգիստ քնանայ , ու ոչ ականջը և ոչ աչքը իրեն անուշ քունին արգելք չըլլան :

## ՉԱ.ՓԱ.ԿԱ.Ն ԳԻՏՈՒԹԻՒՆ

### ՉԱՓԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Ցանորդական դրուրիւն լախոց ու կըսոց :  
(Ցև երես 107)

Այեղը , որ է միութիւն չափու երկայնութեան , է նաև միութիւն չափու մակերեւութի , հաստատութեան , ընդունակութեան , կշուց և արժէից : Այս հիմնական միութեան ստորաբաժանմունքները տասնորդական կարգաւ կը յառաջատին . այսինքն այնպիսի մասանց վրայ բաժանեալ է այս հիմնական միութիւնը որ տասը տասը անգամ մէկ-

մէկէ պզտիկ են, և անոնցմէ իւրաքանչ չիւրը իրմէ անմիջապէս նախընթացին տասներորդ մասն է, և իրմէ անմիջապէս հետեւրդին տասնպատիկն է. նոյն պէս ալքազմապատիկները տասնորդական կարգաւ կը յաջորդեն մէկմէկու, այսինքն այնպիսի կարգաւ որ տասը տասը մէկմէկէ մեծ են :

Իսկ անոնց իւրաքանչիւր անունները բացատրելու համար, հիմնական միութեան անունէն առաջ այս բառերս կը դրուին, նկատմամբ բազմապատիկներուն ու ստորաբաժանմունքներուն ու աձայնաւորովիրարու հետ կը կապուին.

Տասն	որ է	10
Հարիւր	"	100
Հազար	"	1000
Տասն հազար, կամ	{	10,000
Բիւր	"	
Տասնորդ	որ է	0,1
Հարիւրորդ	"	0,01
Հազարորդ	"	0,001
Տասն հազարորդ, կամ	{	0,0001
Բիւրորդ	"	

Աւրոպացիք մեղրական միութեանց բազմապատիկներն ու ստորաբաժանմունքները բացատրելու համար անոնց հիմնական միութեան անունէն առաջ այս անուններս կը դնեն. բազմապատիկներուն՝ Myria, Kilo, Hecto, Deca, որ յունարէն լեզուէն առնուած էն և կը նշանակեն՝ տասն հազար կամ բիւր, հազար, հարիւր, տասն. իսկ ստորաբաժանմունքներուն այս լատինական անուններս կը դնեն՝ Deci, Centi, Milli, Decimilli, և կը նշանակեն տասնորդ, հարիւրորդ, հազարորդ, տասն հազարորդ կամ բիւրորդ։ Ո՞ւնք ալ մեր լեզուին մէջ մեղրական միութեանց հիմնական անունները Ճիշդ պահէցինք, ու անոնցմէ առաջ այս բառերը զրինք՝ աձայնաւորով մէկմէկու հետ կապելով. ուստի մեղրական չափու մը տասնպատիկը բացատրելու համար անոր հիմնական անունէն առաջ տանա. . . զրինք, իսկ տասն անգամ պզտիկը բացատրելու հա-

մար դասնորդա. . . զրինք. այսպէս ալ հարիւրապատիկին ըսինք հարիւրա. . . , հարիւրորդ մասին՝ հարիւրորդա. . . , հազարապատիկին՝ հազարա. . . , հազարորդ մասին՝ հազարորդա. . . , և այլն. որ աւելի Ճիշդ ու բնական է, և տասնորդական զրութեան կանոնացը համեմատ։

Ա. Չափ երիայնութեան : — Ինչպէս որ տեսանք մինչև հիմա, երկայնութեան չափուց գլխաւոր միութիւնն է ՔԵՐԵ. որ 10 հաւասար մասունք կը բաժնուի, որոնք դասնորդամետր կ'ըսուին։ Ո՞ւնք տասնորդամեղրն ալ 10 հաւասար մասունք կը բաժնուի, որ հազարորդամետր կ'ըսուին։ Հազարորդամեղրն ալ 10 հաւասար մասունք կը բաժնուի, որ հազարորդամետր կ'ըսուին։ Հազարորդամեղրն ալ 10 հաւասար մասունք կը բաժնուի, որ դասն հազարորդամետր կ'ըսուին. և այսպէս հետզիետէ։

Որով ըսել է թէ մէկ տասնորդամեղրն է հաւասար տասներորդ մասին մեղրի, մէկ հարիւրորդամեղրն է հաւասար հարիւրորդ մասին մեղրի, մէկ հազարորդամեղրն է հաւասար հազարորդ մասին մեղրի, և այլն։

Ո՞ւնծատարած երկայնութիւններն ալ նոյնպէս մեղրով կը չափուին, և տասնպատիկ կարգաւ կը յառաջատին։ Ինչպէս տասը մեղրը կ'ընեն մէկ դասնութր. տասն տասնամեղրը կամ հարիւր մեղրը կը կազմեն մէկ հարիւրամետր. տասն հարիւրամեղրը կամ թէ հազար մեղրը կ'ընեն մէկ հազարամետր. տասն հազարամեղրը կամ տասն հազար մեղրը կը կազմեն մէկ դասն հազարամետր կամ բիւրամետր. . . ։

Երկու տեղեաց իրարմէ ունեցած հեռաւորութիւնը չափելու համար կը գործածուին բիւրամետրը և հազարամետրը. և երկայնութիւն մը 1,000 մեղր նոր նղն կ'ըսուի, 10,000 մեղր նոր դասն կ'ըսուի, որ են միութիւնք հեռաւորութեան նոր չափուց մէջ։

Ուստի ըստ նոր զրութեան չափուց

Հիւրորդամեղը	է	Հիւրորդ մեղը	=	0 <sup>r</sup> ,0001
Հազարորդամեղը	"	Հազարորդ մեղը	=	0 <sup>r</sup> ,001
Հարիւրորդամեղը	"	Հարիւրորդ մեղը	=	0 <sup>r</sup> ,01
Տասնորդամեղը	"	Տասնորդ մեղը	=	0 <sup>r</sup> ,1
Մեր	"	Միութիւն հինական	=	1 <sup>r</sup>
Տասնամեղը	"	Տասն մեղը	=	10 <sup>r</sup>
Հարիւրամեղը	"	Հարիւր մեղը	=	100 <sup>r</sup>
Հազարամեղը	"	Հազար մեղը կամնոր մղոն	=	1000 <sup>r</sup>
Իվրամեղը	"	Տասն հազար մեղը կամնոր փարսախ	=	10000 <sup>r</sup>

( Սամանեան տէրութեան մէջ գործածուած երկայնութեան չափուց գըլխաւոր միութիւնն է կանգունը , որ երեք տեսակ է . առաջինը կ'ըսուի միւնքին արշնը կամ զիրա , որ է ճարտարապետական կանգունը , և կը բաժնուի 24 սաղ իւրաք կամ մատն , և իւրաքանչիւր սաղ փարմագն ալ 12 սաղը իւրաք կամ զիծ , որով բոլորը 288 սաղը փարմագ կ'ընէ . և է հաւասարազօր 0<sup>r</sup>,757738 , ուստի 1 սաղ փարմագն ալ կ'ըլլայ 0<sup>r</sup>,031572 . . . և 1 սաղը փարմագն ալ կ'ըլլայ 0<sup>r</sup>,002631 . . . Եւ փոխադարձաբար եթէ մէկ ճարտարապետական կանգուննէ 0<sup>r</sup>,757738 , ուրեմն 1<sup>r</sup> =  $\frac{1x\cdot 4}{0,757738}$  և կամ  $\frac{1000000x\cdot 4}{757738}$  = 1<sup>x</sup>· 4 , 31971 . . . և ճարտարապետական կանգնոյն այս տասնորդականները վերածելով սաղ փարմագի և սաղը փարմագի , կը գտնենք որ 1 մեղըն է իւր 1 ճարտ . կանգուն , 7 սաղ փարմագ և 8 սաղը փարմագ :

Հաձկաց երկրորդ տեսակ կանգունն է հասարակ արշնը կամ չուհաճը արշնը , որ բրդեղինաց համար կը գործածուի , և կը բաժնուի 8 բուղ կամ քառորդ , իւրաքանչիւր բուպն ալ 2 իւրահ , որով բոլորը 16 կիրահ կ'ընէ , և է հաւասարազօր 0<sup>r</sup>,6858 , ուստի 1 բուպն ալ կ'ընէ 0<sup>r</sup>,0857 . . . և 1 կիրահն ալ 0<sup>r</sup>,0428 . . .

Եւ փոխադարձաբար եթէ մէկ հասարակ արշնը կ'ընէ 0<sup>r</sup>,6858 , ուրեմն 1<sup>r</sup> =  $\frac{1x\cdot 4}{0,6858}$  և կամ  $\frac{1000000x\cdot 4}{6858}$  = 1<sup>x</sup>· 4 . 458151 . . . և հասարակ արշնին այս տասնորդականները վերածելով բուպի ու կիրահի , կը գտնենք որ 1 մեղըն է

իւր 1 արշն հասարակ , 3 բուպ և 1 կիրահ :

Հաձկաց երրորդ տեսակ կանգունն է էնտապէն , որ կերպասուց համար կը գործածուի , և նախընթացին բաժանմունքն ունի , այսինքն 8 բուպ , կամ 16 կիրահ , և է հաւասարազօր 0<sup>r</sup>,6525 . որով 1 բուպն ալ կ'ընէ 0<sup>r</sup>,0816 , և 1 կիրահն ալ 0<sup>r</sup>,0408 :

Եւ փոխադարձաբար եթէ մէկ էնտապէն կ'ընէ 0<sup>r</sup>,6525 , ուրեմն 1<sup>r</sup> =  $\frac{1x\cdot 4}{0,6525}$  և կամ  $\frac{10000x\cdot 4}{6525} = 1x\cdot 53103 . . .$  և էնտապէին այս տասնորդականները վերածելով բուպի ու կիրահի՝ կը գլունենք որ 1 մեղըն է իւր 1 էնտապէ , 4 բուպ ու կէս :

Հաձկաց մէջ երկայնութեան ուրիշ չափ մըն ալ կայ որ գուլաճ կամ զրկաչափ կ'ըսուի , և է 2,25 ճարտարապետական կանգուն , որ կ'ընէ 2,25 × 0,757738 մեղըն և կամ 1<sup>r</sup>,7049105 . և փոխադարձաբար 1 մեղըն ալ կ'ընէ 0<sup>x</sup>· 4 , 5748136 . . .

Ո՞եծամեծ երկայնութեանց կամ չեռաւորութեանց չափն է մղոնը , որ Հաձկաց մէջ կրկին է , ցամաքային և ծովային . և հազարամեղը վերածելու համար գիտենք որ երկրիս միջօրէին շըր ջանակին քառորդն է 90° կամ 10,000,000 մեղըն և կամ 10000 հազարամեղը , որմէ 1° =  $\frac{10000000r}{90} = \frac{10000x\cdot 4}{90} = \frac{1000x\cdot 4}{9} = 111\frac{4}{9}x\cdot 4 , 111 . . .$  գիտնալու է գարձեալ որ երկրիս մեծագոյն շըրանակի մը մէկ աստիճանը կը բաժնուի 66% ցամաքային մղոն Հաձկաց , որով 1 ցամաք . մղ . տճ . =  $\frac{1x\cdot 4}{66\frac{2}{3}} .$  ուրեմն 1

$$\text{ցամաք} \cdot \text{մղ} \cdot \text{տՃ} \cdot = \frac{1}{66\frac{2}{5}} \cdot \frac{1000\text{հմ}}{9} = \frac{3}{200} \cdot \\ \frac{1000\text{հմ}}{9} = \frac{3\text{հմ}}{5} = 1\text{հմ}, 666 \dots :$$

Եւ փոխադարձաբար հազարամեղրը  
Տաճկաց ցամաքային մղոնի կը վերա.  
Տուի 1հմ. =  $\frac{3\text{հմ.}}{5} = 0\text{հմ.} \cdot \text{մղ.}, 6$  :

Եմանապէս ուզելով Տաճկաց ծու  
վային մղոնը հազարամեղրի վերածել  
գիտնալու է որ երկրիս մեծագոյն շրջանակի մը մէկ աստիճանը կը բաժնուի  
75 ծովային մղոն Տաճկաց , որով 1 ծով.

$$\text{մղ.} \cdot \text{տՃ.} = \frac{1\text{հմ.}}{75} \cdot \text{ուրեմն } 1 \text{ ծով.} \cdot \text{մղ.} \\ \text{տՃ.} = \frac{1}{75} \cdot \frac{1000\text{հմ}}{9} = \frac{40\text{հմ.}}{27} = 1\text{հմ.}, 48\frac{1}{48} :$$

Եւ փոխադարձաբար հազարամեղրը  
Տաճկաց ծովային մղոնի կը վերածուի  
1հմ. =  $\frac{27\text{հմ.}}{40} = 0\text{ծով.} \cdot \text{մղ.}, 655 :$

Ի՞նթերցողաց տեղեկութեանը համար դնենք հոս Տաճկաստանի քանի  
մը գլխաւոր քաղաքաց կանգուններուն  
չափը մեղրի վրայ առած :

Կանգուն Աղեքսանդրիոյ Եպիպոսի	= 0մ, 6806
" Գահիրէի	= 0մ, 6806
" Օմիւռնիոյ = 17 Անգղ. բղ. .	= 0մ, 6858
" Կիպրոսի	= 0մ, 6715
" Կրէտէի	= 0մ, 6377
" Հալէպի	= 0մ, 6771

և փոխադարձաբար մեղրը նոյն կանգուններուն վերածելով՝ կը գտնենք որ կ'ընէ

1մ = 1,4693 Կանգուն Աղեքսանդրիոյ Եպիպոսի	
1մ = 1,4693 "	Գահիրէի
1մ = 1,4584 "	Օմիւռնիոյ
1մ = 1,4892 "	Կիպրոսի
1մ = 1,5684 "	Կրէտէի
1մ = 1,4769 "	Հալէպի

(Պատմ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ)

### ՏՆՏԵՍԱԿԱՆ

Ընդէւնելու դահնեւու նոր իւրու :

Պահել ուզած ընդեղենդ լեցու պուգալներու  
մէջ և բերաններնուն մօտ երկերկու մատ սկարապ  
թողլով, և բերաննին սունկի խցանով դոցէ, ո-  
րոնք ամուր ըլլալու համար երկըմի թելով խա-  
շածե կապէ . և հասա լաթէ քսակներ շինած պու-  
գալները անոնց մէջը դիր, և ոսքի վրայ կեցուցած  
շարէ պաղ ջրով լցուած կաթսայի մը մէջ, այնպէս  
որ ինչուան շիշերուն վիզը ջուրը հասնի . ետքը  
կաթսային խուփը գոյէ բերնին եղեղքը թաց լաթ  
դնելով, որպէս զի խուփը աղէկ գոյցուի, ու կաթ-

սան կրակին վրայ գիր որ ջուրը եփ ելէ : Թարմ  
լուրիա (Թաղէ ֆասուլիա,) ոլոռն (պիզելիա) .  
բակա, ուրիշ այս տեսակ ընդեղենաց համար մէկ  
ժամէն աւելի պէտք է եփել . իսկ կանաչեղինաց  
համար, որոնք մանր ջարդած կրնան շիշերու մէջ  
դրուիլ, կէս ժամեփելը բաւական է . ետքը կրա-  
կէն վար առած կը թողուս որ պաղի, ու ետքը  
նկուղի կամ ուրիշ զով տեղ մը տախտակի մը վրայ  
շարած կը պահնես շիշերը . շատ օր անցնելէն ետե  
մը շիշերն որ կ'երևան (թէ բերաննին աղէկ գոյած  
չէ եղեր, կամ ընդեղենին երեսը մըլելու նշան կը  
ցուցընեն, անոնք երկար չեն պահուիր : Այս  
կերպով ժամանակէ գուրս ուզած ընդեղենդ կըր-  
հաս ունենալնոր բուսածին համով :